ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 12.12.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2019/231

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ.Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտե
Մասնակից՝ «Տեխնո Սիթի» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Տեխնո Սիթի» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ՝ Հ. Ղազարյանի, Ս. Սահակյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-19/068» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, վերահսկման և ղեկավարման սարքերի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 29.11.2019թ.-ի թիվ 26/26-1/19869-2019 գրությամբ «Տեխնո Սիթի» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Տ

1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Պատվիրատու) 26.11.2019թ. թիվ 1/18-2/73747-2019 գրության հիման վրա, 29.11.2019թ.-ին «Տեխնո Սիթի» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

Բողոքներ քննող անձի գործը մակագրվել է 29.11.2019թ.-ի և նույն օրը կայացված որոշմամբ գործը ընդունվել է վարույթ ու 05.12.2019թ.-ին նշանակվել է նիստ:

Գործի քննությունն ավարտվել է 05.12.2019թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 12.12.2019թ.-ին:

2. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն 26.11.2019թ. թիվ 1/18-2/73747-2019 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը հայտնելով հետևյալը.

«ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար կազմակերպված ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-19/068 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում «Տեխնո Սիթի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերը չեն համապատասխանել հրավերի պահանջներին: Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու մասին» N 526-Ն որոշման 41-րդ կետի (այսուհետ՝ կարգի) 11.11.2019թ-ին «Տեխնո Սիթի» ՍՊԸ-ին ծանուցվել է ներկայացնել որակավորման շտկված փաստաթղթերը: Սահմանված ժամկետում շտկված փաստաթղթերը ներկայացվել են մասնակցի կողմից, սակայն չի շտկվել առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը (Հավելված 3.1) և հայտը մերժվել է:»:

Միևնույն ժամանակ, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետը, ներկայացվել է թիվ «ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-19/068» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Տեխնո Սիթի» ՍՊԸ-ի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը, որոնք կցվել են ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված գրությանը:

3. <u>«Տեխնո Սիթի» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 02.12.2019թ.-ին գրությամբ դիմել է «ՏԵԽՆՈ ՍԻԹԻ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 29.11.2019թ.-ի թիվ 26/26-1/19869-2019 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է նիստին և ներկայացրել գրավոր դիրքորոշում, որում հայտնում է հետևյալը.

«Ձեր վարույթում քննվող ՍՅ-ԼՕ-2019/231 ծածկագրով ընթացակարգի վերաբերյալ հայտնելով դիրքորոշումս նշեմ, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ նաև Կոմիտե) պահանջը «Տեխնո Սիթի» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ հիմնավորված չէ հետևյալ պատճառաբանություններով:

27.11.2019 թվականին ներկայացրել ենք ՀՀ ՊԵԿ կարիքների համար վերահսկման և ղեկավարման սարքերի ձեռքբերման նպատակով հայտարարված թիվ «ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-19/068» ծածկագրով գնման ընթացակարգի վերաբերյալ բողոք, որի քննության վերաբերյալ դեռևս որոշում չի կայացվել:

Մինչ թիվ «ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ- 19/068» ծածկագրով գնման ընթացակարգի վերաբերյալ բողոքի քննության վերաբերյալ որոշման կայացումը Կոմիտեն ներկայացրել է «Տեխնո Սիթի» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ պահանջ:

Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա գրությամբ ներառված են գնումների գործրնթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի «Գնումների կազմակերպման» կարգը հաստատելու մասին 526-Ն որոշման հավելված 1-ով հաստատված կարգի 45-րդ կետի համաձայն Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ Օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվել: Այսինքն միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Սույն դեպքում հաշվի առնելով այն հանգամանքը, որ թիվ «ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-19/068» ծածկագրով գնման ընթացակարգին Ընկերության մասնակցությունը դադարեցվել է գնման գործընթացի շրջանակում մասնակցի ստանձնած պարտավորությունների ենթադրյալ խախտման հիմքով, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, ապա այդ հանգամանքը կարող է հիմք ընդունվել միայն այն դեպքում, երբ դրա վերաբերյալ առկա է վերջնական որոշում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ ՊԵԿ կարիքների համար վերահսկման և ղեկավարման սարքերի ձեռքերման նպատակով հայտարարված թիվ «ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-19/068» ծածկագրով գնման ընթացակարգի վերաբերյալ թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2019/98 ծածկագրով բողոքի քննության վերաբերյալ դեռևս առկա չէ որոշում և միգուցե նաև այն բողոքարկվի դատական կարգով, ուստի մինչ գնման ընթացակարգի բողոքարկման վերաբերյալ վերջնական որոշման կայացումը, հնարավոր չէ արձանագրել մասնակցի

ստանձնած պարտավորությունների խախտումը և այս հիմքով Ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:»:

Մասնակիցը Բողքներ քննող անձին խնդրել է՝ մերժել «Տեխնո Սիթի» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ պահանջը:

4. <u>ՍՑ-LO-2019/231 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից վերահսկման և ղեկավարման սարքերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-19/068» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել միայն «Տեխնո Սիթի» ՍՊԸ-ն:

Ընկերությունը մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցմանը մասնակցելու դիմում-հայտարարությամբ հայտարարել և հավաստել է, որ «ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-19/068» ծածկագրով գնանշման հարցմանը մասնակցելու նպատակով դիմում-հայտարարությունում նշված չափաբաժնի (չաւիաբաժինների) մասով առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են նույն հրավերի համապատասխան չափաբաժնում (չաթփբաժիններում) նշված ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերի պահանջներին և պարտավորվում է առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 06.11.2019թ.-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Տեխնո Սիթի» ՍՊԸ-ն:

Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է առաջարկել 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցին երեք աշխատանքային օրվա ընթացքում սահմանված կարգով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընկերությունը թիվ 3.1 հավելվածով՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով ներկայացրել է Ընթացակարգի հրավերով պահանջված ապրանքի հետևյալ տեխնիկական բնութագրերը.

«Սարքավորումը պետք է ունենա ծրագրային ապահովում, որը կկառավարի մաքսատան տարածք մուտք գործող քաղաքացիների հոսքը, կկառավարի ուղեփակոցի աշխատանքը, փոխկապակցված կլինի՝

- *Մաքսային տարածքում մաքսային ձևակերպման հերթերի կառավարման համակարգի հետ*
- *Մաքսային մարմնի ավտոմատացված տեղեկատվական համակարգի հետ (տարանցման հայտարարագրի):*

Համակարգիչ Պրոցեսոր - Intel® Celeron®: Dual-Core J1800 SoC onboard Processors, Օպերատիվ հիշողություն - DDR3L 2GB LAN - 1 X Gigabit LAN Controller Մշտական հիշողություն - 120Gb QR / barcode reader Newland, Image Sensor 800x800 CMOS Illumination, White LED, Minimal Print Contrast 25%, Scan Angle Roll 360°, Scan Angle Pitch ±40°, Scan Angle Skew ±40°, Field of View Horizontal 74°, Field of View Vertical 74°, Scan Modes Sense Mode, Continuous Mode Scan Window 50mm x 50mm, 1D EAN-8, EAN-13, UPC-A, UPC-E, ISSN, ISBN, Codabar, Standard 2 of 5, Code 128, Code93, ITF-6, ITF-14, GS1 Databar, MSI-Plessey, Code 39, Interleaved 2 of 5, Industrial 2 of 5, Matrix 2 of 5, Code 11, Plessey, etc., 2D PDF417, Data Matrix, QR Code, Micro QR Code, Aztec, etc., Operating Temperature -20°C to 60°C Humidity 5% to 95% (non-condensing), Electro Static Discharge (ESD) ±15 kV (air discharge), ±8 kV (direct discharge), Sealing IP65, Ունի հովացուցիչ, ֆիլտրեր, տաքացուցիչ, թերմոստատ:

Կաղապարը՝ մետաղական:

Ծրագրային ապահովումը պետք է ապահովի՝

- *Քաղաքացիների առցանց գրանցման հնարավորություն*
- *Առցանց գրանցումների կենտրոնացված ղեկավարման հնարավորություն:*

Առցանց գրանցման միջոցով քաղաքացիներին պետք է ընձեռվի մաքսատան տարածք մուտք գործելու համար էլեկտրոնային անդորրագիր ստանալու հնարավորություն՝ յուրաքանչյուր տրանսպորտային միջոցի համար: Առանց տվյալ անդորրագրի քաղաքացին չպետք է կարողանա մուտք գործել մաքսատան տարածք:

Յուրաքանչյուր մուտքի էլեկտրոնային անդորրագրի ստեղծման համար համակարգը պետք է ունենա ֆունկցիոնալություն՝ մուտքագրելու հետևյալ անհրաժեշտ տեղեկատվությունը

- *Իդենտիֆիկացիոն պարամետր*
- *Մաքսատան տարածք մուտք գործելու նախատեսված օր և ժամ*
- *Կոնտակտային հեռախոսահամար:*

Հաջողությամբ ստեղծված անդորրագրի դեպքում համակարգը պետք է հնարավորություն ընձեռի տպել դրա թղթային օրինակը, կամ ուղարկել այն մուտքագրվող էլեկտրոնային փոստի հասցեով: Անդորրագրի կորցնելու դեպքում համակարգը պետք է այն վերականգնելու հնարավորություն ընձեռի: Ընդ որում, համակարգը պետք է ունենա որոշակի կանխարգելիչ քայլերի հնարավորություն, որպեսզի բացառվեն կեղծարարության դեպքերը:

Անհրաժեշտության դեպքում համակարգը պետք է նաև հնարավորություն ունենա փոփոխել անդորրագրի տվյալները: Ընդ որում, համակարգը պետք է ունենա որոշակի կանխարգելիչ քայլերի հնարավորություն, որպեսզի բացառվեն կեղծարարության դեպքերը: Առցանց գրանցումների ղեկավարման ծրագիրը պետք է հնարավորություն ընձեռի պատվիրատուի պատասխանատու աշխատակիցներին սահմանել համակարգի ընդհանուր և ընթացիկ կարգավորումներ՝ ներառյալ.

- *Աշխատանքային օրեր և ժամեր*
- *Գրանցման համար հասանելի օրեր և ժամեր*
- *Գրանցումների քանակների կառավարում:»:*

Հանձնաժողովի 11.11.2019թ.-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Տեխնո Սիթի» ՍՊԸ-ի որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում հայտնաբերվել են անհամապատասխանություններ, մասնավորապես, Ընկերության կողմից ներկայացված 2018 թվականի հոկտեմբերի 19-ին կնքված թիվ «ՀՀ ԿԱ ՈՋ ԳՀԱՊ ՁԲ-18/12/ԱԲ/10/ԿԾ/133» ծածկագրով պայմանագրի կատարման ժամկետը սահմանված է պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո ոչ ուշ քան 20 օրացուցային օրից մինչև 20.11.2018թ., սակայն պայմանագրի արդյունքը հանձնվել է 03.12.2018թ.-ին:

«ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-19/068» ծածկագրով ընթացակարգի հրավերի 2.5-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն նմանատիպ պայմանագիր է համարվում վերահսկման և ղեկավարման սարքերի մատակարարված լինելը, սակայն մասնակցի կողմից ներկայացվել է 2018 թվականի հոկտեմբերի 19-ին կնքված թիվ «ՀՀ ԿԱ ՈՋ ԳՀԱՊ ՁԲ-18/12/ԱԲ/10/ԿԾ/133» տեսահսկողության համակարգի ձեռքբերման պայմանագիր, որը չի հանդիսանում նմանատիպ պայմանագիր:

Ընկերության կողմից ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը (Հավելված 3.1) հստակ սահմանված չէ, մասնավորապես, հասկանալի չէ, թե մասնակցի կողմից ներկայացվող ապրանքը ինչ բնութագիր ունի, բացի այդ հրավերով ներկայացված տեխնիկական բնութագիրը նույնությամբ ներկայացնելը չի ենթադրում առաջարկվող ապրանքի բնութագրում:

Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է առաջարկել «Տեխնո Սիթի» ՍՊԸ-ին երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

Ի պատասխան վերոնշյալ ծանուցման, Ընկերությունը 13.11.2019թ.-ին հայտնել է, որ … Հավելված 3.1-ում ապրանքի տեխնիկական բնութագիրը նույնությամբ համապատասխանում է Պատվիրատուի կողմից պահանջվող ապրանքի տեխնիկական բնութագրին և «Տեխնո Սիթի» ՍՊԸ-ն չի կարող շեղվել Պատվիրատուի կողմից պահանջվող տեխնիկական բնութագրերից:

Հանձնաժողովի 15.11.2019թ.-ի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Տեխնո Սիթի» ՍՊԸ-ն ներկայացրել է գնումների մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի շտկված տարբերակները (տեղեկությունները), բացի առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրից (Հավելված 3.1):

Ընկերության կողմից ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը (Հավելված 3.1) հստակ սահմանված չէ, մասնավորապես, «պետք է» բառը չի սահմանում, որ առաջարկվող ապրանքը հստակ ունի նման բնութագիր և հնարավորություն:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետը, Հանձնաժողովը որոշել է «Տեխնո Սիթի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժել և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Ընթացակարգը հայտարարել չկայացած:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացրել 26.11.2019թ.-ին:

<u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 29.11.2019թ.-ի թիվ 26/26-1/19869-2019 գրությամբ «Տեխնո Սիթի» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Վերոգրյալ իրավանորմի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել հետևյալը.

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից վերահսկման և ղեկավարման սարքերի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-19/068» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել միայն «Տեխնո Սիթի» ՍՊԸ-ն:

Հանձնաժողովի 06.11.2019թ.-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Տեխնո Սիթի» ՍՊԸ-ն, ինչով պայմանավորված Հանձնաժողովը որոշել է առաջարկել 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցին երեք աշխատանքային օրվա ընթացքում սահմանված կարգով

ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընկերությունը թիվ 3.1 հավելվածով՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով՝ ներկայացրել է Ընթացակարգի հրավերով պահանջվող ապրանքի տեխնիկական բնութագրերը:

Հանձնաժողովի 11.11.2019թ.-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Տեխնո Սիթի» ՍՊԸ-ի որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում հայտնաբերվել են անհամապատասխանություններ, մասնավորապես,...Ընկերության կողմից ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը (Հավելված 3.1) հստակ սահմանված չէ, հասկանալի չէ թե մասնակցի կողմից ներկայացվող ապրանքը ինչ բնութագիր ունի, բացի այդ հրավերով ներկայացված տեխնիկական բնութագիրը նույնությամբ ներկայացնելը չի ենթադրում առաջարկվող ապրանքի բնութագրում:

Վերոնշյալով պայմանավորված՝ Հանձնաժողովը որոշել է առաջարկել «Տեխնո Սիթի» ՍՊԸ-ին երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները, որին ի պատասխան Ընկերությունը 13.11.2019թ.-ին հայտնել է, որ ... Հավելված 3.1-ում ապրանքի տեխնիկական բնութագիրը նույնությամբ համապատասխանում է Պատվիրատուի կողմից պահանջվող ապրանքի տեխնիկական բնութագրին և «Տեխնո Սիթի» ՍՊԸ-ն չի կարող շեղվել Պատվիրատուի կողմից պահանջվող տեխնիկական բնութագրերից:

Հանձնաժողովի 15.11.2019թ.-ի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Տեխնո Սիթի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը (Հավելված 3.1) հստակ սահմանված չէ, մասնավորապես, «պետք է» բառը չի սահմանում, որ առաջարկվող ապրանքը հստակ ունի նման բնութագիր և հնարավորություն, ինչով պայմանավորված Հանձնաժողովը որոշել է «Տեխնո Սիթի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժել և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Ընթացակարգը հայտարարել չկայացած:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացրել 26.11.2019թ.-ին թիվ 1/18-2/73747-2019 գրությամբ:

Սույն գործի փաստերի համաձայն, Բողոքներ քննող անձը փաստում է, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ են եկել 15.11.2019թ.-ին՝ հիմք ընդունելով Հանձնաժողովի 15.11.2019թ.-ին կայացած նիստի թիվ 4

արձանագրությունը, սակայն Պատվիրատուն մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկել է լիազորված մարմին՝ ՀՀ ֆինանսների նախարարություն, 26.11.2019թ.-ին՝ հինգ աշխատանքային օրվա խախտմամբ:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Ամբողջացնելով վերը թվարկված իրավական նորմերը, դրանց համադրման արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ուղարկելը Պատվիրատուի պարտականությունն է, այն իմպերատիվ (պարտադիր) դրույթ է, որի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել իրավահարաբերության առաջացումը:

Հակառակ դեպքում Կարգի 45-րդ կետով սահմանված դրույթները չեն ծառայի իրենց նպատակին, այլակերպ մեկնաբանման դեպքում կհանգցնեն որևէ ողջամիտ իրավական փաստարկով չհիմնավորվող մեկնաբանության՝ հաշվի չառնելով այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացված որոշումներից մեկով կարևորել է, որ Հայաստանի Հանրապետության՝ որպես իրավական պետության կարևորագույն հատկանիշ է այն, որ սահմանադրական մակարդակով պետությունը հավաստում է իր հավատարմությունն այդ տեսությանը, ճանաչում և ամրագրում է իր կախվածությունն իրավունքից, իրավունքի գերակայությունը՝ պետական իշխանության նկատմամբ: Իրավական պետության և իրավունքի գերակայության սկզբունքը, ի թիվս այլոց, դրսևորվում է նրանում, որ Հայաստանի Հանրապետությունը որդեգրել է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների՝ որպես անմիջականորեն գործող իրավունք լինելու գաղափարը: Այն իր արտացոլումն է գտել նաև 2015 թվականի

փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 5-րդ (Իրավական նորմերի աստիճանակարգությունը) և 6-րդ (Օրինականության սկզբունքը) հոդվածներում՝ մասնավորապես ամրագրելով, որ Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և որ **պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով** *(տե՛ս, «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ն ընդդեմ Էդիկ Հակոբյանի թիվ ԼԴ/0509/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 12.07.2018 թվականի որոշումը):*

Ընդ որում պետաիշխանական լիազորություններով օժտված ցանկացած մարմնին, իր գործառնական կարգավիճակին համապատասխան, օրենքով և նորմատիվ իրավական ակտերով կարող են վերապահվել ինչպես պարտադիր, այնպես էլ հայեցողական լիազորություններ՝ պայմանավորված սահմանադրաիրավական այն հիմնադրույթի իրացման անհրաժեշտությամբ, ըստ որի՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով, չպետք է հակասեն և պետք է համապատասխանեն Սահմանադրությանը, օրենքներին կամ նորմատիվ իրավական ակտերին:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Պատվիրատուի կողմից չի պահպանվել Կարգի 45-րդ կետի դրույթներով սահմանված իմպերատիվ (պարտադիր) դրույթները, որպիսի պայմաններում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 29.11.2019թ.-ի թիվ 26/26-1/19869-2019 գրությամբ «Տեխնո Սիթի» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք

չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2019/231 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**